Հայաստանի Հանրապետության հռչակման և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին նվիրված ուղերձ

1918 թ. մայիսյան հաղթական մարտերով ու Հայաստանի Հանրապետության հռչակումով հայ ժողովուրդը թևակոխեց հայոց **նորագույն պատմության** ժամանակաշրջանը: Հայության կյանքում այդ իրադարձություններն ունեցան բախտորոշ նշանակություն.

1918 թ. մայիսին Թովմաս Նազարբեկյանի, Մովսես Սիլիկյանի, Դանիել-բեկ ու Պողոս-բեկ Փիրումյանների, Գարեգին Նժդեհի, Դրոյի, Ա. Բեյ Մամիկոնյանի, Ն. Ղորղանյանի և տաղանդավոր այլ զորավարների գլխավորությամբ Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում հայ զորականների ու աշխարահազորի տարած հաղթանակների շնորհիվ հնարավոր եղավ կասեցնել թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Արևելյան Հայաստանի խորքերը և խափանել ինչպես արևելահայության, այնպես էլ Արարատյան դաշտում և այլ վայրերում ծվարած հարյուրհազարավոր արևմտահայ գաղթականների վերջնական բնաջնջման թուրքական ծրագիրը: Այդ համաժողովրդական պայքարին մասնակցություն ունեցան հայ ժողովրդի բոլոր խավերը: Մայիսյան մարտերին մասնակցեցին հեծյալ դասակի հրամանատար, ապագա մարշալ Հովհ. Բաղրամյանը, լեզվաբան Գր. Ղափանցյանը, գրող Ա. Բակունցը, Գարեգին արք. Հովսեփյանի գլխավորած հոգևորականների ջոկատը: Կռիվներում աչքի ընկան այլազգի բազմաթիվ զինվորականներ՝ ռուսներ Վ.Պերեկրոստովը, Ն. Կլիչը, Ա. Շնեուրը, հույն Վլ. Սակիլարին և ուրիշներ:

Մայիսյան հաղթանակների շնորհիվ հայ քաղաքական շրջանակներում վստահություն առաջացավ սեփական պետականությունը վերականգնելու և անկախության նվիրական գաղափարը կյանքի կոչելու խնդրում:

Ի տարբերություն Անդրկովկասյան ժողովրդավարական Դաշնային Հանրապետության մեջ մտնող մյուս քաղաքական ուժերի, որոնք իրենց անկախության հռչակման քայլը համաձայնեցրել էին գերմանացիների և օսմանյան թուրքերի հետ, հայ ժողովուրդն իր անկախությունը ձեռք բերեց ազատագրական պայքարի՝ մայիսյան հերոսամարտերի գնով:

Մայիսյան հերոսամարտերը ստիպեցին թուրքերին Բաթումում ընթացող բանակցություններին մասնակից դարձնել նաև հայկական պատվիրակությանը և 1918 թ. հունիսի 4-ին Հայաստանի հետ կնքած պայմանագրով ճանաչել նորահռչակ Հայաստանի Հանրապետությունը:

Հայոց պետականության վերականգնման գործում բացառիկ նշանակություն ունեցավ հայ հասարակական-քաղաքական շրջանակներում գործող կառույցների, մասնավորապես Հայոց ազգային խորհրդի գործունեությունը, որին էլ վիճակվեց հռչակելու Հայաստանի անկախությունը: Երևանի ազգային խորհրդի նախագահ, Հայոց ազգային խորհրդից դիկտատորի լիազորություններ ստացած Արամ Մանուկյանը, օգտագործելով 1915 թ. մայիս-հուլիսին Վանում՝ Վան-Վասպուրականի նահանգապետի պաշտոնում պետականաշինության ոլորտում կուտակած ահռելի փորձը, Երևանի նահանգում հաստատեց կարգ ու կանոն, ամրապնդեց երկրի պաշտպանունակությունը, մեծ նպաստ բերեց մայիսյան կռիվներում հաղթանակի հասնելու գործում և կարողացավ հասնել անկախության ձեռքբերմանը: Դրանով իսկ Արամ Մանուկյանը հիրավի դարձավ հայոց նորագույն պետականության հիմնադիրը:

Հայոց պետականության վերականգնման ու ամրապնդման գործում մեծ դերակատարություն ունեցավ Հայ առաքելական եկեղեցին՝ Գևորգ Ե Ամենայն հայոց կաթողիկոսի գլխավորությամբ: Ինչպես Մայիսյան հերոսամարտերին, այնպես էլ հայոց նորօրյա պետականաշինության գործընթացին իրենց գործուն մասնակցությունը բերեցին հայաստանաբնակ եզդիները՝ Ուսուբ բեկ Թեմուրյանի (ՀՀ խորհրդարանի անդամ) և Ջհանգիր աղայի առաջնորդությամբ:

Հայաստանի Առաջին Հանրապետությունը ծնվեց ծանր պայմաններում՝ 12 հազ. քառ. կմ-ի վրա, որն աստիճանաբար ամրապնդվեց և ընդարձակվեց:

Անկախության հռչակումից հետո առաջնահերթ խնդիրներից մեկը իշխանության մարմինների ստեղծումն էր: Սկզբում իշխանության ժամանակավոր գործառույթներն իրականացնում էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը, որը, թուրքերի կողմից ճանապարհներին հարուցած արգելքների պատճառով, ինչպես և այլ հանգամանքների բերումով, չէր կարողանում Վրաստանից տեղափոխվել Երևան: Հայաստանում իշխանության ղեկը շարունակում էր մնալ Երևանի ազգային խորհրդի ձեռքում:

1918 թ. հուլիսի 19-ին Ազգային խորհուրդը ժամանեց Երևան: Ազգային խորհուրդների (Թիֆլիսի, Երևանի) և քաղաքական կուսակցությունների համաձայնությամբ կազմվեց իշխանության բարձրագույն մարմին՝ Հայաստանի խորհուրդ (պառլամենտ, խորհրդարան), որի մեջ մտան ազգային խորհուրդների, տարբեր կուսակցությունների, անկուսակցականների, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ ընդամենը 46 հոգի: Հուլիսի 24-ին հրապարակվեց կառավարության կազմը. վարչապետ՝ Հովհ. Քաջազնունի, ներքին գործերի նախարար՝ Արամ Մանուկյան, արտգործնախարար՝ Ալեքսանդր Խատիսյան, ֆինանսների նախարար՝ Խաչատուր Կարճիկյան, զինվորական նախարար՝ գեներալ Հովհաննես Հախվերդյան և արդարադատության նախարար՝ Գրիգոր Տեր-Պետրոսյան:

Օգոստոսի 1-ին Երևանում հանդիսավորությամբ բացվեց հայոց առաջին պառլամենտի՝ խորհրդի (խորհրդարանի) անդրանիկ նստաշրջանը: Խորհրդի նախագահ ընտրվեց Ավետիք Սահակյանը (Հայր Աբրահամ): Նստաշրջանը որոշում ընդունեց երկիրը ծանրագույն վիճակից դուրս բերելու ուղղությամբ շուտափույթ քայլեր ձեռնարկելու մասին: Մինչև հիմնական օրենքի՝ սահմանադրության ընդունումը, որոշվեց ժամանակավորապես առաջնորդվել ցարական Ռուսաստանի «Հավաք օրինաց» օրենքների ժողովածուով: Մինչև տարեվերջ բարելավվեց դատական համակարգը: Ստեղծվեց երդվյալ ատենակալների դատարան:

1919 թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանն ընդունեց կարևոր որոշում՝ հայոց լեզուն պետական ճանաչելու մասին: Գործավարությունը բոլոր հիմնարկներում այդուհետ կատարվելու էր հայերենով: Ընդունվեց պետական դրոշը՝ եռագույնը, որը պետք է բարձրացվեր պետական կառավարման մարմինների շենքերի վրա: Ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և նկարիչ Հակոբ Կոջոյանի կողմից ներկայացվեց հանրապետության զինանշանը: Հանրապետությունում իբրև պետական հիմն գործածվում էր «Մեր հայրենիքը»: Սահմանվեցին շքանշաններ, տոներ: «Հայրենիքին ծառայության համար», «Վարդան զորավար» և այլ շքանշաններ ունենալու մասին որոշումներ ընդունվեցին: Սկսվեց հայրենադարձություն:

Հանրապետության կառավարությունը մեծ ուշադրություն հատկացրեց բանակի ամրապնդման հարցին: Հին բանակը, որի կորիզը հայկական կորպուսն էր, այլևս չէր համապատասխանում ժամանակի ոգուն, ուստի կազմացրվեց և նոր՝ 20-25 տարեկանների զորահավաքի հիման վրա կազմվեց հայկական դիվիզիան՝ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ: Մինչև 1920 թ. բանակի թիվն իր 10 գնդերում հասավ 25 հազարի: Սևանում հիմք դրվեց ռազմական նավատորմին, որի առաջնեկը դարձավ «Աշոտ Երկաթ» ռազմանավը:

1919 թ. հունիսի վերջին անցկացվեցին ընտրություններ 366 հազար ընտրողների, քաղաքական 7 կուսակցությունների մասնակցությամբ: Ընտրելու իրավունք ստացան 20 տարին լրացած բոլոր քաղաքացիները՝ անկախ սեռից, ազգային ու կրոնական պատկանելությունից: Ընտրության իրավունք վերապահվեց նաև արևմտահայ գաղթականությանը: Խորհրդարանի 80 անդամներից 72-ը դաշնակցականներ էին: 1919 թ. օգոստոսի 1-ին բացվեց նորընտիր խորհրդարանը, որը հաստատեց նոր կառավարության կազմը վարչապետ Ալ. Խատիսյանի ղեկավարությամբ:

Հանրապետության ամրապնդման գործընթացը շարունակվեց: Հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ ինչպես հարևան, այնպես էլ հեռավոր երկրների հետ: 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևր քաղաքում համաշխարհային պատերազմում հաղթանակած Անտանտի երկրների և պարտված Օսմանյան

Թուրքիայի միջև կնքված դաշնագրով Հայաստանի Հանրապետությանը պետք է միացվեր շուրջ 90 հազար քառակուսի կմ տարածք Արևմտյան Հայաստանի Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգներից, որով հայոց պետության տարածքը կազմելու էր մոտավորապես 160 հազար քառակուսի կմ:

Սակայն խորհրդաքեմալական համագործակցության հետևանքով այս ծրագիրը չիրագործվեց: 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմի հետևանքով և դեկտեմբերի 2-ի Երևանյան համաձայնագրով խորհրդայնացմամբ կործանվեց Հայաստանի Հանրապետությունը: Պետականության մոտ երկուսուկես տարվա կարճատև ընթացքում հայ ժողովուրդն ունեցավ լուրջ առաջընթաց: Երկարատև ընդմիջումից հետո վերականգնվեց հայոց պետականությունը, սկսվեց հայրենադարձություն, ստեղծվեցին իշխանության մարմիններ, բավականին ուժեղ բանակ, մարդկանց մեջ ամրապնդվեց պետականության գիտակցությունն ու զգացողությունը: Ժամանակի հայ ազգային-քաղաքական շրջանակները, նախընտրելով խորհրդարանական կառավարման համակարգը, նպաստավոր պայմաններ ստեղծեցին երկրում ժողովրդավարության արագ ներդրման ու զարգացման համար:

Թեև ընկավ հանրապետությունը, սակայն նրա գոյությունն անհետևանք չմնաց: Նրա հիմքի վրա բոլշևիկները պարտավորված ստեղծեցին նոր հանրապետություն՝ Խորհրդային Հայաստանը, որի շուրջ 70-ամյա պատմության ընթացքում հայ ժողովուրդն ապրեց տնտեսական ու մշակութային մեծ վերելք: Փաստորեն Առաջին Հանրապետության հենքի վրա, թեև վարչաքաղաքական միանգամայն այլ համակարգի պայմաններում ստեղծված Խորհրդային Հայաստանն էլ հող նախապատրաստեց Երրորդ՝ անկախ Հանրապետության ձևավորման համար:

Այս է շուրջ հարյուրամյա հեռավորությունից 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ու անկախ պետականության հռչակման պատմական խորհուրդը: